ԵՐԿԱՄՍՅԱ ԴԱՍԸՆԹԱՑ ՓԱՐԻԶԻ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

06.06.2022 11:50

Հարգելի փաստաբաններ,

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի, Փարիզի փաստաբանների պալատի և Փարիզի փաստաբանական դպրոցի միջև առկա շարունակական համագործակցության շրջանակներում այս տարի ևս **Հայաստանից 1 փաստաբան հնարավորություն կունենա մասնակցել Փարիզում անցկացվող "Stage International" (ֆրանսերեն) 8 շաբաթյա ծրագրին (դասընթացին)**:

Ծրագրի ընտրական փուլն արդեն սկսված է: **Մրցույթին մասնակցելու համար կարող են դիմել** ֆրանսերենի գերազանց իմացությամբ այն փաստաբանները, որոնց տարիքը չի գերազանցում 40 տարեկանը և որոնց փաստաբանական գործունեության արտոնագրի գործողությունը դիմելու պահին կասեցված չէ:

Ծրագիրն անց է կացվելու 2022 թվականի հոկտեմվերի 3-ից նոյեմբերի 25-ը (8 շաբաթ):

Փարիզում բնակվելու և ճանապարհի **բոլոր ծախսերը պետք է հոգա անձամբ մասնակից փաստաբանը**: Հնարավոր է նաև որոշակի ֆինանսական աջակցության և/կամ կացարանի տրամադրում:

Մրցույթի մասնակցության համար հայտերը և անհրաժեշտ փաստաթղթերը պետք է ներկայացվեն մինչև 2022 թվականի հունիսի 17-ը:

Հայտերի ներկայացման և անհրաժեշտ փաստաթղթերի հետ կապված մանրամասն տեղեկատվության կարող եք ծանոթանալ ստորև ներկայացված նկարագրում.

Բեռնել "Stage International" (ֆրանսերեն) ծրագրի նկարագիրը.

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })